

# «ԳԱԶՈՅԼ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

---

Լոռու մարզի Սարչապատ համայնքի Գոգավան գյուղի 1-ին  
փողոց 10/5 հասցեում նախատեսվող բազմավառելիքային  
լցակայանի

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման  
հաշվետվություն

«ԳԱԶՈՅԼ» ՍՊԸ տնօրեն՝

Կ. Մարգարյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	4
2. Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը .....	5
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	6
3. 1. Տեղադիրքը և ֆիզիկաաշխարհագրական պայմանները .....	6
3. 2. Կլիման.....	8
3. 3. Բուսական և կենդանական աշխարհ.....	10
3. 4. Բնության հատուկ պահպանվող տարածքներ .....	14
3. 5. Ջրային ռեսուրսներ.....	16
3. 6. Հողեր.....	16
3. 7. Մթնոլորտային օդ.....	17
3. 8. Սոցիալ-տնտեսական պայմանները .....	17
4. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ...18	
4.1. Զրոյական տարբերակ .....	18
4.2. Քննարկվող տարբերակներ .....	19
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....	20
5.1. Ընդհանուր տեղեկատվություն .....	20
5. 1. 1. Շինարարական աշխատանքներ.....	20
5. 1. 2. Շահագործման փուլ.....	31
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՅՅ	
6.1. Շինարարական աշխատանքներ .....	33
6. 1. 1. Օդի աղտոտում.....	33
6. 1. 2. Հողային աշխատանքներ.....	33
6. 1. 3. Աղմուկի և թրթռումների ազդեցություն .....	34
6. 1. 4. Զրոգտագործում և ջրահեռացում.....	35
6. 1. 5. Ազդեցությունը հողածածկի վրա.....	36
6. 1. 6. Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա.....	37
6. 1. 7. Սոցիալական ազդեցությունը .....	37
6.2. Շահագործման փուլ.....	37
6. 2. 1. Օդի աղտոտում.....	37
6.2.2. Ջրային ռեսուրսներ.....	40
6. 2. 3. Այլ ազդեցություններ.....	42
6. 2. 4. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն.....	42
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ .....	42
8. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	44
8. 1. Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ.....	44
8. 2. Հրդեհային անվտանգություն .....	45

8. 3.	Արտակարգ և վթարային իրավիճակներ .....	46
9.	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՂՄՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ .....	47
10.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	47
10. 1.	Շինարարական աշխատանքներ .....	47
10. 2.	Լցակայանի շահագործման փուլ .....	50
10.2.1.	<i>Մշտադիտարկումների իրականացման պլան</i> .....	50
ՀԱՎԵԼՎԱԾ 1.	Վնասակար նյութերի ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկի արդյունքները .....	25

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ավտոմեքենաների բնական և հեղուկ գազի, հեղուկ վառելիքի, էլ լիցքավորման կայանի կառուցումը նախատեսվում է ՀՀ Լոռու մարզ Սարչապետ համայնք Գոգավան 1-ին փողոց 10/5 հասցեում: Ավտոմեքենաների հեղուկ գազի, հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ավտոմեքենաների բնական և հեղուկ գազի, հեղուկ վառելիքի, էլ լիցքավորման կայանի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման նախնական գնահատման հայտը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Սույն նախաձեռնության ձեռնարկող է «Գագոյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք.Տաշիր, Ջաշուկյան-10: Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Սարչապետ համայնք, Գոգավան բնակավայր, 1-ին փողոց, 10/5

Աշխատանքային նախագծի մշակող՝ «Արխի-տուր» ՍՊԸ:

2014թ. -ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է "Բ" կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է

շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության երկու փուլով՝ նախնական և հիմնական:

Սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության "Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն" ՊՈԱԿ-ի կողմից 05. 10. 2020թ . տրամադրված թիվ SU40 տեխնիկական պայմանների պահանջների հիման վրա:

Սույն ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված են տեղանքների բնակլիմայական և սոցիալական ելակետային տվյալները:

Հաշվետվությունում նկարագրված են գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, օգտագործվող հումքը և տեխնիկական միջոցները:

Դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ զրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունը կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

## 2. Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

*«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)*

*«ՀՀ ջրային օրենսգիրք» (2001)*

*«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)*

*«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք*

*«Կենդանական աշխարհի պահպանության մասին» ՀՀ օրենք*

*«Բուսական աշխարհի պահպանության մասին» ՀՀ օրենք*

*«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)*

*«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք*

*«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)*

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

### 3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

#### 3. 1. Տեղադիրքը և ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Ավտոմեքենաների բնական և հեղուկ գազի, հեղուկ վառելիքի, էլ լիցքավորման կայանի կառուցումը նախատեսվում է ՀՀ Լոռու մարզ Սարչապետ համայնք Գոգավան 1-ին փողոց 10/5 հասցեում:

Տարածքում արդեն իսկ իրականացվել են հողային և հարթեցման աշխատանքները:

Տարածքը գտնվում է Գոգավան մաքսակետ չհասած մոտ 500 մ հեռավորության վրա՝ ճանապարհի աջակողմյան հատվածում :

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:



Նկար 1. Տեղանքի իրադրային սխեմա

### 3. 2. Կլիման

Տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրամանով հաստատված „Շինարարական կլիմայաբանություն, ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթից: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորակման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009թ. ներառյալ) տվյալների հաշվառումով:

Կլիման չափավոր-ցամաքային է (զով ամառ, մեղմ ձմեռ): Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է  $+14 - 25^{\circ}$  C-ի միջև: Տեղումների տարեկան քանակը (բազմամյա միջին) 450-700 մմ է:

Ձյունածածկը կայուն չէ, տեղ-տեղ այն հասնում մինչև 50սմ: Լեռնագագաթներին և ջրբաժանների վրա ձյան ծածկույթը պահպանվում է մինչև մայիս-հունիս ամիսը, իսկ մնացած մասերում ձյունածածկի տևողությունը 1-2-ից մինչև 4-5 ամիս է:

Ստորև բերված են Տաշիրի տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները՝



**Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Տաշիր օդերևութաբանական կայանի տվյալներով**

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստամիսների, C <sup>0</sup>												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Տաշիր	1507	-4,8	-3,8	-0,7	5,7	10,4	13,3	16,0	15,7	12,1	7,4	2,2	-2,5	5,9	-34	34

**Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը Տաշիրի օդերևութաբանական կայանի տվյալներով**

Օդերևութաբանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին		
														13	հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			14	15
Տաշիր	67	69	71	70	77	78	78	77	78	76	71	67	73	58	61	

**Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները Տաշիրի օդերևութաբանական կայանի տվյալներով**

Բնակավայրի անվանումը	Տեղումների												Տարեկան	Չնածածկույթ		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվամեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյանմեջջրի Առավելագույն քանակը, մմ
	Ըստամիսների															
	20	30	39	70	130	132	81	60	54	45	35	19				
Տաշիր	26	31	32	36	55	72	61	54	64	40	33	23	715	72	67	73
	42	26	47	38	46	61	33	40	36	40	32	31	61			


### 3. 3. Բուսական և կենդանական աշխարհ

Հայաստանի բնակչության բարեկեցությունը մեծապես կախված է կենսաբանական պաշարների առկայությունից, որոնք երկրի համար հանդիսանում են ռազմավարական ռեսուրսներ:

Կամայական գործունեության իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը կրող կենսաբազմազանության և էկոհամակարգերի մասին տվյալները հավաքագրվել և մշակվել են հիմնվելով կենսաբազմազանության վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից: Հավաքվել և վերլուծվել է ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալ շրջանին վերաբերող համարյա ամբողջ գիտական տեղեկատվությունը: Որից հետո համապատասխան մասնագետների կողմից իրականացվել է այցելություն ուսումնասիրվող տարածքներ ֆլորայի և ֆաունայի արդի վիճակը գնահատելու համար: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ շրջանին բնորոշ ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բույսատեսակների և կենդանատեսակների առկայությանը:


Ուսումնասիրվող տարածքը գտնվում Գոգավան գյուղի տարածքում և ենթարկված է անտրոպոգեն ազդեցության, իսկ բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, ուսումնասիրվող տարածքում բուսականությունը գրեթե բացակայում է:

Հայաստանի տարածքում առանձնացվում է 12 ֆլորիստիկ շրջաններ (տես՝ նկար 2): Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Լոռու ֆլորիստիկ շրջանում (*Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)*) և չոր տափաստանային միջինլեռնային (1400-2300 մ.ծ.մ) լանշաֆտային գոտում, որով և պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը (տես՝ նկար 3): Ուսումնասիրվող տարածքի բացարձակ բարձրությունները տատանվում են 1450-1500մ-ի սահմաններում:



Նկար 2. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները

Տվյալ տարածաշրջանի ֆլորայի վերաբերյալ գիտական տվյալները սակավաթիվ են, սակայն հավաքվել և վերլուծվել է տվյալ շրջանին վերաբերող համարյա ամբողջ գիտական տեղեկատվությունը: Որից հետո համապատասխան մասնագետների կողմից իրականացվել է այցելություն ուսումնասիրվող տարածք և հարակից տարածքներ՝ ֆլորայի արդի վիճակը գնահատելու համար: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ շրջանին բնորոշ (ՀՀ բույսերի Կարմիր գրքում 2010թ.) գրանցված բույսերի առկայությանը:



Նկար 3. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները

Գոգավան գյուղի շրջակայքում հիմնականում տնկված անտառներ և անտառապաշտպան գոտիներ են, որոնք պատկանում են Տաշիրի անտառտնտեսությանը: Կաղնի-բոխու անտառի շատ փոքր հատված գտնվում է Վրացական կաղնու սահմանին (*Quercus iberica* և *Carpinus betulus*): Անմիջապես գյուղի տարածքում հիմնականում մրգատու ծառեր են (հիմնականում խնձորենի): Ուսումնասիրվող տարածքը ներկայացված է հիմնականում տափաստանային մոլախոտային բուսականությամբ (*Amaranthus retroflexus*, *Heracleum sosnovskyi*, *Achillea millefolium*, *Centaurea iberica*, *Lepidium ruderae* և ըր.) և растения, заходящие с окружающих луговых территорий (*Dactylis glomerata*, *Phleum phleoides*, *Poa angustifolia*, *Taraxacum officinale*):

Ուսումնասիրվող տարածքում և նրա շրջակայքում, ըստ առկա գրականության, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գնացված տեսակներ կամ դրանց աճելավայրեր չկան: Դաշտային հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ տարածքը և շրջակայքը

գյուղատնտեսական հողեր են, ամբողջությամբ մշակված և այստեղ ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ կամ դրանց աճելավայրեր չեն հայտնաբերվել:

Այսպիսով, ուսումնասիրվող տարածքում և նրա հարակից տարածքներում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ բույսերի հազվագյուտ տեսակներ, քանի որ տարածքը մշտապես գտնվել է մարդկային գործոնի ազդեցության տակ, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Ցամաքային կենդանիների դաշտային ուսումնասիրությունները իրականացվել են ընդունված մեթոդներով (Формозов, 1951, 1976, Новиков, 1953 և այլն), ինչպես նաև ուսումնասիրվել է տարածաշրջանի վերաբերյալ առկա համապատասխան գրականությունը:

Կաթնասունների դիտարկումները մեծամասամբ լինում են պատահական, առավել հաճախ գրանցվել են նրանց գործունեության հետքերը, որոնցից են օրինակ՝

- թաթերի հետքերը գրունտի և ցեխի վրա,
- կենդանիների կղանքը,
- հետքեր կապված կենդանու սննդառության հետ (սննդի մնացորդներ, կրծվածքներ, քերվածքներ և այլն),
- թաքստոցներ (բներ, որջեր, գաղութներ):

Տեղանքին բնորոշ կաթնասուններից առավել տարածված են՝ Սովորական ոզնի (*Erinaceus concolor*), Նապաստակ (*Lepus europaeus*), Քարակզաքիս (*Martes foina*), Աքիս (*Mustela nivalis*), Սովորական աղվես (*Vulpes vulpes*), Սովորական դաշտամուկ (*Microtus arvalis*), Անտառային մուկ (*Apodemus sylvaticus*), Գայլ (*Canis lupus*), Սովորական շնագայլ (*Canis aureus*):

Թռչունների դիտարկումները իրականացվել են օգտագործելով հեռադիտակներ «Bushnell»: Ուսումնասիրվող և դրան հարակից տարածքների՝ կարճատև դաշտային հետազոտությունների, ինչպես նաև համապատասխան գրականության մշակման արդյունքները ներկայացված են ստորև: Թռչուններից տարածքում հանդիպող տեսակներն են՝ Տափաստանային ճուռակ (*Buteo rufinus*), Սովորական հողմավար բազե (*Falco tinnunculus*), Հոպոպ (*Upupa epops*), Դաշտային արտույտ (*Alauda arvensis*), Սպիտակ խաղտունիկ (*Motacilla alba*), Ժուլան (*Lanius collurio*), Սև կեռնեխ (*Turdus merula*), Տնային ճնճղուկ (*Passer domesticus*), Դաշտային ճնճղուկ (*Passer montanus*), Սովորական կաչաղակ (*Pica pica*), Մոխրագույն ագռավ (*Corvus corone*), Սև ագռավ (*Corvus corax*), Լոր (*Coturnix coturnix*), Աղավնի թխակապույտ (*Columba livia*), Գյուղական ծիծեռնակ (*Hirundo rustica*), Քաղաքային ծիծեռնակ (*Delichon urbicum*), Տնային բվիկ (*Athene noctua*), Կարմրակատար (*Carduelis carduelis*):

Հերպետոֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ստացվել է գրականության մշակման և դաշտային հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա: Կապված բնական լանդշաֆտների ոչնչացման հետ, ինչի արդյունքում ոչնչացվեցին սողունների բնական ապրելավայրերը, նրանց տեսակային

կազմը զգալի կրճատվել և փոփոխությունների է ենթարկվել: Հերպետոֆաունան ներկայացված է՝ Կանաչ դոդոշ (*Bufo viridis*), Շերտավոր մողես (*Lacerta strigata*), Շելկովնիկովի ծառագորտ (*Hyla orientalis*), Փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*), Լճագորտ (*Pelophylax ridibundus*), Դյուրաբեկ իլիկամողես (*Angulis colchica*), Միջին մողես (*Lacerta media*), Ճարպիկ մողես (*Lacerta agiles*), Ջրային լորտու (*Natrix tessellata*), Սովորական լորտու (*Natrix natrix*), Պղնձօձ (*Coronella Laurenti*):

Հետազոտվող տարածքում հանդիպող անողնաշարավորների տեսակային կազմը որոշվել է գրականության և դաշտային այցելությունների ընթացքում ստացված տվյալների վերլուծության արդյունքում: Տարածքի անողնաշարավորները ուսումնասիրված են խիստ անհավասարաչափ: Անողնաշարավորների ֆաունան ներկայացնող կարգաբանական խմբերից տարածքում հանդիպում են Հողվածոտանիների տիպի, Միջատների դասի Բզեզների (*Coleoptera*) կարգից մոտ 120 տեսակ, Ցերեկային թիթեռների (*Lepidoptera-Rhopalocera*) ենթակարգից մոտ 20 տեսակ, Փափկամարմինների (*Mollusca*) տիպի մոտ 4 տեսակ, Ուղղաթևավորներից մոտ 16 տեսակ:

Ամենայն հավանականությամբ միջատների տեսակային կազմը նույնպես կրել է զգալի փոփոխություններ՝ ևս կապված բնական լանդշաֆտի ոչնչացման հետ: Ուրբանիզացիայի, և գյուղատնտեսության հետևանքով առաջացած բուսական ծածկույթի գրեթե լիովին փոփոխությունը հանգեցրեց միջատների տեսակային և քանակական կազմերի զգալի փոփոխություններին:


Հարկ է նշել, որ ուսումնասիրվող և նրա հարակից տարածքներում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների վիզուալ հանդիպումներ չեն գրանցվել: Չեն հայտնաբերվել նաև դրանց կենսագործունեության հետքեր (ոտնահետքեր, կերի մնացորդներ, էքսկրեմենտների քանակ, փորվածքներ, բներ, հանգստավայրերի առկայություն, կղկղանք), ինչը բացատրվում է տվյալ տարածաշրջանի բավականին ուրբանիզացված լինելու, բնական էկոհամակարգերի խիստ փոփոխված և դեգրադացված լինելու հանգամանքով: Կան սակայն մի շարք կենդանատեսակներ, որոնք բավականաչափ հանդուրժող են մարդկային միջամտության նկատմամբ, և մնում են տեղում (օրինակ՝ նապաստակը, ոզնին և այլն): Բացի այդ, որոշ տեսակներ կարող են բավականաչափ հարմարվողական կենսակերպ վարել նոր պայմանների նկատմամբ (օրինակ՝ աղվեսը կամ որոշ թռչնատեսակներ):

Այսպիսով, ուսումնասիրվող տարածքում և նրա հարակից տարածքներում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ կենդանիների հազվագյուտ տեսակներ, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

### 3. 4. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության

հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը (տես՝ նկար 4):



Նկար 4. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները

Ուսումնասիրվող տարածքը անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Ուսումնասիրվող տարածքից ավելի քան 30կմ դեպի արևմուտք գտնվում է՝ «Արփի լիճ» ազգային պարկը, իսկ դեպի հարավ, ավելի քան 30կմ հեռավորության վրա է գտնվում «Գյուլագարակի» պետական արգելավայրը: Ուսումնասիրվող տարածքին մոտ գտնվող բնության հուշարձաններ չկան:

Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ, վավերացրել է կենսաբազմազանությանն առնչվող մի շարք միջազգային բնապահպանական պայմանագրեր, կոնվենցիաներ և համաձայնագրեր, որոնցով ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը նպաստում է շրջակա միջավայրի և կենսաբազմազանության արդյունավետ պահպանությանը:

Եվրախորհրդի Բեռնի կոնվենցիայի ներքո Հայաստանում «Էմերալդ» ցանցի ստեղծման ծրագրի շրջանակներում առանձնացվել են նաև բնապահպանական տեսակետից մի շարք

արժեքավոր տարածքներ: 2018 թվականի ընթացքում իրականացվել են լրացուցիչ ուսումնասիրություններ, վերլուծվել են ստացված տվյալները, որոնց հիման վրա էլ կատարվել են «Էմերալդ ցանցի տարածքների վերանայման և սահմանների օպտիմալացման աշխատանքներ: Այսպիսով՝ Հայաստանում «Էմերալդ» ցանցի կազմում ընդգրկվելու համար առաջարկվող 28 պոտենցիալ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 455645.7 հա (հանրապետության տարածքի 15.3%):

Ուսումնասիրվող տարածքը ներառված չէ «Էմերալդ» ցանցի մեջ և նրա հետ անմիջական սահմաններ չունի:

### 3. 5. Ջրային ռեսուրսներ

Տարածքում չկան մեծ գետեր ու լճեր: Հարավային մասով՝ Գոգավանից մոտավորապես 3. 2 կմ հեռավորության վրա, հոսում է Դեբեդի վտակ Ձորագետը, որը սկիզբ է առնում Ջավախքի լեռնաշղթայից, հոսելով Լոռվա հրաբխային սարավանդով, առաջացնում է խոր Կանիոն: Գետի երկարությունը 57կմ է, ավազանի մակերեսը 1460քառ.կմ, տարեկան հոսքը 531 մլն խմ, ծախսը՝ 16,8 խմ/վրկ, հոսքի մոդուլը 11,6լ/վրկ/կմ, հոսքի գործակիցը 0,48:

ՀՀ տարածքում մակերևութային ջրերի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից: ՊՈԱԿ-ը Ձորագետի վրա ՊՈԱԿ-ն ունի երկու դիտակետ՝ 0.5 կմ Ստեփանավանից վերև (№8) և գետաբերանին (№10): Ըստ ՊՈԱԿ-ի 2019 թվականի ամփոփագրի երկու կետերում էլ ջրի որակը համապատասխանում է II կատեգորային («լավ»):

### 3. 6. Հողեր

Տարածքում հիմնականում առկա են լեռնային գորշ անտառային և լեռնային դարչնագույն հողերը, ինչպես նաև լեռնային սևահողերը: Լեռնային գորշ անտառային հողերը առանձնանում են ծագումնաբանական հորիզոնների թույլ զատորոշմամբ և բնորոշվում են կլանման միջին ծավալով, թույլ հազեցվածությամբ ու կրազերծվածությամբ:

Լեռնային դարչնագույն հողերը տարածված են մինչև 1700 մ բարձրությունները, իսկ արևահայաց լանջերում նաև 2100 մ: Այս հողերը բնութագրվում են հորիզոնների թույլ, առանձին դեպքերում չափավոր զատորոշմամբ, խոր և ինտենսիվ կավայնացմամբ, վերին հորիզոնի չափավոր հումուսացվածությամբ, միջին և միջինից մեծ կլանունակությամբ, չեզոք կամ թույլ հիմնային ռեակցիայով:

Լեռնային սևահողերով հիմնականում հարուստ են այն տարածքները, որոնք անտառոտնտեսությանն են տրվել անտառապատման նպատակով: Այս հողերը առանձնանում են ծագումնաբանական հորիզոնների լավ զատորոշմամբ, կնձկահատիկային կառուցվածքով, մեծամասամբ հզոր պրոֆիլով, վերին շերտերի ուժեղ հումուսացվածությամբ: Հողերի գերակշռող մասն ունի փոքր ծավալային կշիռ, բարձր ծակոտկենություն և խոնավունակություն:



### 3. 7. Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

ՊՈԱԿ-ը Սարչապետ համայնքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ „Հայէկոմոնիթորինգ,-ի առաջարկած է համապատասխան ձեռնարկ-ուղեցույցի<sup>1</sup>: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup>;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

### 3. 8. Սոցիալ-տնտեսական պայմանները

Ներկայացվող գործունեության ազդակիր է Սարչապետ համայնքը:

Սարչապետ համայնքը (վարչական կենտրոնը գ.Սարչապետ) ներառում է 7 բնակավայր. Ապավեն, Արծնի, Ձորամուտ, Գոգավան, Պետրովկա, Պրիվոլնոյե, Նորաշեն:

Մակերես՝ 22,16կմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 2102

Տնային տնտեսությունների թիվը՝ 480:

Բնակչությունը հիմնականում Արևմտյան Հայաստանի Մուշից, Ալաշկերտից գաղթածներն են, որոնք 1826-28թթ. Ռուս-պարսկական պատերազմի օրերին տեղահանվելով ճանապարհ են ընկել դեպի Արեւելյան Հայաստան:

Բարձրությունը ծովի մակարդակից 1705 մետր: Բնակավայրերի ռելիեֆը լեռնային է, խիստ էռոզացված, ամռանը գոլ է, ձմռանը՝ չափավոր ցուրտ: Ձմռան տևողությունը 202 օր է, իսկ ամռանը՝ 163 օր: Տարեկան միջին ջերմաստիճանը 3.6°C է, իսկ առավելագույնը՝ +28°C -30°C: Տարեկան տեղումների քանակը 700-720մմ է: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1732,4 հա, որից՝ 551,7 հա վարելահող, 3441հա խոտհարք, 745,8 հա արոտ: Հողերը գտնվում են 30-40° թեքության վրա:

Համայնքը չունի սպորտհրապարակ, մարզադահլիճ:

Համայնքն ունի բուժկետ, որը սկսել է գործել 2004թ-ից: Բուժկետն ունի համապատասխան գույք, սարքավորումներ, դեղանյութեր:

<sup>1</sup> ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

Համայնքում կա 1913թ. կառուցված եկեղեցի, որն այսօր կիսավեր վիճակում է: Գործում է 2005թ. կառուցված առաքելական եկեղեցին, որի հիմնադիրը Ռուսաստանի Դաշնությունում ապրող ու աշխատող սարչապետի գործարար է: Գյուղի հյուսիսային մասում <<Լոք>> սարի վրա կա մատուռ, ուր ամեն տարի մայիս ամսին կատարվում է ուխտագնացություն՝ <<Հիսուսի համբարձման օրը>>:

Համայնքում ամեն տարի անցկացվում է համագյուղացի Աշոտ Պալաքյանի անվան շախմատի հուշամրցաշարը:

Համայնքի բնակչությունը աղքատ է. աննպաստ են գյուղատնտեսությամբ զբաղվելու պայմանները, ցածր է տնտեսության ապրանքայնության աստիճանը: Առաջընթացի խոչընդոտ են հողակտորների վատորակ լինելը, կլիմայական անբարենպաստ պայմանները, աշխարհագրական վատ դիրքը, գյուղ. մթերքի իրացման շուկայի պակասը, դրանց կապող ճանապարհների անմխիթար վիճակը, ինչպես նաև գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների քանակի պակասը:

Համայնքում գյուղատնտեսության փոքր-ինչ չափով զարգացած ճյուղերից են անասնապահությունը և հողագործությունը: Հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կարտոֆիլի արտադրությամբ: Այս արտադրությունը կախված է բնության քմահաճույքից: Անձրևային տարիներին որոշ չափով դեռ կարելի է բերք հավաքել. իսկ երաշտ տարիներին գյուղացին կորցնում է բերքի 75 տոկոսը:

Համայնքում առկա է աշխատուժի մասսայական արտագաղթ այդ թվում մանկավարժական կադրերի, ինչը հանգեցնում է գյուղատնտեսության ու կրթության մակարդակի ցածրացմանը: Արտագաղթի բուն պատճառը գործազրկությունն է: Համայնքին օգնություն են ցուցաբերում արտերկրում ապրող ու աշխատող սարչապետի հովանավորները:

Համայնքում առկա առաջնային հիմնախնդիրներից են՝ Նորաշեն-Սարչապետ ճանապարհահատվածի և ներհամայնքային փողոցների ասֆալտապատումը, խմելու ջրի ջրագծի կառուցումը, հակակարկտային կայանի տեղադրումը, մանկապարտեզի գույքավորումն ու գազաֆիկացումը, մարզահրապարակի կառուցումը, գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերումը, մշակույթի տան վերանորոգումը:

Համայնքը սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը:

#### 4. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ

##### ՏԱՐԲԵՐԱԿԸ

##### 4.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և նախատեսվող լցակայանը չի կառուցվում: Այս դեպքում՝

- Բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված լրացուցիչ ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից գրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- Տարածաշրջանի տրանսպորտային միջոցների համալիր սպասարկման որակի բարելավում:
- Նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորություններ չեն լինի:

#### 4.2. Քննարկվող տարբերակներ

Քանի որ ձեռնարկողի նպատակը եղել է վառելիքի լցակայանի կառուցումը և շահագործումը, որպես տարբերակներ դիտարկվել են այդ գործունեությունը կազմակերպելու ստորև ներկայացված 2 տարբերակները.

Ա. Կառուցվում և շահագործվում է միայն հեղուկ գազի լցակայան:

Այս տարբերակի առավելություններն են.

- շինարարական աշխատանքների ծավալները և համապատասխանաբար կապիտալ ներդրումների ծավալները կլինեն ավելի փոքր,
- սպասարկող անձնակազմը կլինի ավելի փոքրաքանակ և ընթացիկ ծասխերը նույնպես կլինեն ավելի քիչ

Տարբերակի բացասական կողմերն են.

- ավելի ցածր շահութաբերություն
- վառելիքի մատակարարման սահմանափակ ծավալներ:

Բ. Կառուցվում և շահագործվում է համալիր՝ հեղուկ գազի, դիզելային վառելիքի և բենզինի լցակայան:

Այս տարբերակի առավելություններն են.

- ավելի բարձր շահութաբերություն
- տեսակարար ծախսերի ավելի ցածր մակարդակ:

Տարբերակի բացասական կողմերն են.

- կապիտալ ծախսերի ավելի բարձր մակարդակ
- շինարարական աշխատանքների ավելի երկար տևողություն:

Վերլուծելով ներկայացված տարբերակները ընտրվել է երկրորդ տարբերակը հետևյալ հիմնավորումներով.

- բնապահպանական ազդեցությունը գործնականում նույնն է, քանի որ շինարարական աշխատանքների ժամանակ հողային աշխատանքների ծավալները նույնն

են, իսկ արտանետումների տարբերությունը կկազմի մոտավորապես 12 – 13 տոկոս, քանի որ հիմնական վաճառվող վառելիքը հեղուկ գազն է, որի ծավալները 7 - 8 անգամ ավելի շատ են, քան բենզինի և դիզվառելիքի, համապատասխանաբար արտանետումները նույնքան ավելի շատ կլինեն:

- շահութաբերությունը ավելի բարձր է:

## 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### 5.1. Ընդհանուր տեղեկատվություն

Նախատեսվում է ՀՀ մարզ Լոռի, Սարչապետ համայնք, գ. Գոգովան 1-ին փողոց, 10/5 հողամաս հասցեում գտնվող, ԳԱԶՈՅԼ ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի հասարակական նշանակության չկառուցապատված տարացքում կառուցել բազմավառելիքային՝ բնական գազի ավտոգազալիցքավորման ճնշակայան, հեղուկ գազի լիցքավորման կայան, հեղուկ վառելիքի լիցքավորման կայան, և էլեկտրոավտոլիցքավորման վահանակ: Առաջարկվող նախագծով բնական գազի ավտոգազալիցքավորման ճնշակայանի շահագործման համար նախատեսված է մեքենայական մասնաշենք. վարչական և հասարակական սպասարկման նշանակության մասնաշենք, որը իր մեջ ներառում է սպասասրահ, հասարակությանը և սպասարկող անձնակազմի համար սանհանգույցներ, հասարակական սպասարկման՝ սրճարան, առևտրի սրահ և այլն, օպերատորական սենյակ:

#### 5. 1. 1. Շինարարական աշխատանքներ

Շինարարությունը նախատեսվում է իրականացնել 18 ամսվա ընթացքում՝ համաձայն օրացույցային գրաֆիկի:

*Շինարարական աշխատանքների պայմանները.*

- |  |                         |
|--|-------------------------|
| - Սեյսմիկ ազդեցությունը՝                 | - 3-րդ գոտի,            |
| - Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ | - 35կգ/մ <sup>2</sup> , |
| - Ձյան նորմատիվային քաշը՝                | - 60կգ/մ <sup>2</sup> , |
| - Ձմռան միջին ջերմաստիճանը՝              | - 15°C-18°C:            |

*Տեխնիկատնտեսական ցուցանիշներ*

- Մակերեսը կազմում՝ 0.8575 հա
- Կառուցապատման մակերես - 5921 քմ
- Կանաչապատման մակերես – 2654 քմ

Բոլոր նոր կառուցվող մասնաշենքերը իրականացվում են ե/բ կրող կոնստրուկցիաներով, քարե պարփակող պատերով: Մեքենայական մասնաշենքի և

լցասյունների ծածկերը նախատեսված է իրականացնել մետաղական թեթև կոնստրուկցիաներով:

Բնական գազի լցասյունների ծածկոցը ներկայացնում է հատակի նիշից 5.0մ բարձրությամբ թեթև կոնստրուկցիաներից ծածկ, որի՝ հատակագծային լուծումը իրականացված է 4.00 առանցքային հեռավորությամբ 5.65 մ երկարությամբ 2.0 մ բարձրությամբ, միմյանց նկատմամբ զուգահեռ, միաձույլ ե/բ 9 հատ բաժանարար պատերից:

Ճնշակայանը ե/բ կրող կոնստրուկցիաներով 13.0 x 9 մ արտաքին չափերով կարկասային շինություն է: Բոլոր շինությունների պարփակող պատերը իրականացվում են ուղիղ կտրվածքի տուֆ քարերով , իսկ ճնշակայանի պարփակող պատերը 200մմ հաստությամբ:

Տանիքը՝ միաթեք, ծպեղնակավարամածային կոնստրուկցիաներով , ծածկված տանիքի կղմինդրատիպ փոշեներկված թիթեղով: Ջրահեռացումը արտաքին է և կազմակերպված: Արտաքին հարդարումը իրականացվում է ց/ա սվաղով և ներկվում ջրադիմացկուն ներկով: Պարապետները իրականանում է ալիկաբոնդով: Միջնապատերը իրականացվում են պեմզաբլոկներից: Պեմզաբլոկները 200 մմ և 100մմ հաստությամբ, ամրակապվում են մետաղյա ճկուն կապերով՝ պատերի և ծածկերի սալերի հետ :

Ներքին հարդարման աշխատանքները իրականացվում են ց/ա սվաղով, մածիկապատվում և ներկվում են լատեքսային ներկերով:

*Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա*

Հողային աշխատանքների տևողությունը կազմում է 50 օր, թեկուզ տարածքում արդեն իսկ իրականացվել են որոշ ծավալի հողային և հարթեցման աշխատանքները (տես Google earth պատկերը): Հողային աշխատանքների ծավալները՝ 4320 մ<sup>3</sup>, այդ թվում 480 մ<sup>3</sup> բուսահող, որը առանձնացվում է և պահպանվում հետագա բարեկարգման և կանաչապատման աշխատանքների համար:

Շինարարության ժամանակ նախատեսվում է ներգրավել 17 աշխատակից, այդ թվում՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 2 մարդ,
- Արհեստագործներ, բանվորներ՝ 10 մարդ,
- Մեքենավարներ և օգնականներ՝ 5 մարդ:

Նախատեսվում է օգտագործել հետևյալ շինարարական տեխնիկական միջոցները.

- Էքսկավատոր /հիդրոմուրճով/՝ 1 հատ,
- Բեռնատար ինքնաթափ՝ 1 հատ,
- Բուլդոզեր՝ 1 հատ,
- Էքսկավատոր՝ 1 հատ,

- Ավտոամբարձիչ՝ 1 հատ:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Նախագիծը իրականացնել ՀՀ գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Հակահրդեհային պաշտպանությունը իրականացվել է հակահրդեհային հիդրանտների միջոցով: Տարացքում իրականացվելու է շանթապաշտպանություն:

*Ջրամատակարարում և կոյուղի*

Նախագծային վառելիքի լիցքավորման կայանի սանիտարական հանգույցների և հակահրդեհային ջրի միացումը տրված է Վեոլիա ջուր ընկերության գործող Փ-100մմ ջրատարին:

Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քանակության համար անհրաժեշտ է նախատեսել ջրի պաշարապահ ծավալ՝ 50մ<sup>3</sup> տարողությամբ ե/բետոնյա ջրավազան, համապատասխան պոմպակայանով:

Պոմպակայանից ջրավազանից ջուրը մղվում է հակահրդեհային դիտահոր, որտեղ նախատեսված է 2 հատ հակահրդեհային Փ-50մմ միացման գլխիկներ:

Տարածքում նախատեսված է տեղադրել առաջնային հակահրդեհային միջոցներ:

Պոմպակայանից ջրագիծը միացվում է նաև 50մ<sup>3</sup> տարողության հովացման բաքին: Տաք ջրի պատրաստումը կատարվում է էլեկտրատաքացուցիչի միջոցով, որը տեղադրված է խոհանոցի պատի վրա:

Շենքի մեջ տաք և սառը ջրագծերը հատակներում տեղադրված է հատակի բետոնի միջով, իսկ պատերի վրա սվաղի միջով ջերմամեկուսացումով:

Խողովակները ընտրված են մետաղապլաստե Փ=15-50մմ ջերմամեկուսացումով:

Կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում է ներքին ցանցի միջոցով կոյուղու բակային ցանց, որտեղից լցվում է գործող արտակնոցային փոս /անթափանց պատերով և հատակով/:

Արտակնոցային փոսից ժամանակ առ ժամանակ ավտո-ցիստերնով հավաքված կեղտաջրերը տեղափոխվում են նախատեսված վայր:

Կոյուղու կանգնակների օդափոխության խողովակը նախատեսված է անց կացնել տանիքից դուրս:

Ցանցերի համար կիրառված են պլաստիկ խողովակներ պատերի և առաստաղների վրա՝ Փ-50-100մմ:

Ցանցերի վրա նախատեսված են ստուգիչներ՝ ստուգումներ կատարելու և հետագա շահագործելու համար:

Ներքին գործող կոյուղու ցանցերը ապամոնտաժվում են, կառուցելով նոր կոյուղագծեր պլաստիկ խողովակներով:

*Էլեկտրամատակարարում և ջերմամատակարարում*


Լոռու մարզի Սարչապետ համայնք Գոգավան 1-ին փողոց 10/5 հասցեում նախատեսվող վառելիքի լիցքավորման կայանի էլեկտրամատակարարումը կիրականացվի ՀԷՑ ցանցից համաձայն տեխնիկական պայմանի, պայմանագրային հիմունքներով: Նախատեսվող կայանի տաք ջրամատակարարումը և ջեռուցումը կիրականավի էլեկտրական սարքերի միջոցով:

*Գազամատակարարում*

Սարչապետ համայնքի վառելիքի լիցքավորման կայանի գազամատակարարումը Օ.=630լսմ/ժամ ծախսով համաձայն տեխնիկական պայմանի իրականացվելու է «Գոգավան» անցակետը սնող D=76մմ տրամագծով վերգետնյա գործող գազատարից (Տեխնիկական պայմանը կցվում է):

Ստորև բերված է գլխավոր հատակագիծը, շինարարական հատակագծերը և աշխատանքների ժամանակացույցը:


# Տարածքի գլխավոր հատակագիծ





ՊԵՏԱԿԱՆ ԵԾԱՆՆԵՐ  
 1. X=442759.5710 ԳՐԱՄԱՍԻ ԵՐԳԱՂԱԳՈՒՄԻՆ ԲԵՎԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՈՒՄԱՆԵՐ  
 y=4963443.5490

ՏՆՕՐԵՆ	Գ. ԿԱՐՄԻՅԱՆ	<i>[Signature]</i>	ՔՐԱՏԱՆԿԱՌՈՒՓՈՒՆԻ ԼՍԱԿԱՑՈՒՄԻ « ԼՍԻՍԿՈՑ 22 ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶՈՒ ԱՆԴՐԱՆՈՒՄԻՆ ՀԱՄԱՆԵՐԼՔ ԳՅՈՒՄԱԿԱՆ 1-Ն.ՓՈՐՏՆ 105 ԵՂԱՄԱՆՍ		
Ն. Գ. Ը.	Կ. ՀՈՒԿԵԱՆ	<i>[Signature]</i>	ՄԵՓՈՒՎԱԾԱՆԵՐ « ԳՆՈՒՄԱԿ » ՍՊԸ	ՓՈՒԼ	ՁԵՐԹ
Ն. Գ. Ը.	Ա. ԴԱՌՈՒՅԱՆ	<i>[Signature]</i>	ՃԱՐՏԱՄԱՐԿԵՍԱՎՈՒՄ ՄԱՍ	Ա	3
			ՔՐԱՎՈՒՄԻՔՍԱՆ ՀԱՏԱԳՈՒՐԾ Ս 1:2000	«ԱՄԿՆ ՏՈՒՆ» ՍՊԸ	










№	ՆԱԿԱՆՈՒՄ
1	ՄԱՍՍԱՆՈՒՐ ՕՐԵՐԱՏՈՐԱԿԱՆ, ՄԱՍՆԱԵՆԵ
2	ԲԱՆԱԿԱՆ ՈՒՇԻ ԼԵՍԱՑՈՒՄԱԿԵՐ
3	ՃՆՏԱԿԱՅԱՆ
4	ԿՈՆՏՐԱԿՑ ՍԱՄԱԿՈՆԵՐԻ ԴՈՐ
5	ԷԼ. ԵՆՏԱԿԱՅԱՆ
6	ԲԵՐՈՒԿՎԱՆԵԼԻՔԻ ԴՈՐ
7	ԲԵՂԻՒԻ ԼԵՍԱՑՈՒՄԱԿ
8	ԴՈՎՎԱՆԵԼԻՔԻ ԼԵՍԱՑՈՒՄԱԿ
9	ԲԵՐՈՒԿՎԱՆԻ ԼԵՍԱՑՈՒՄԱԿ
10	ՕՐԵՐԱՏՈՐԱԿԱՆ
11	ԱՏՈՐԳԵՏՆԱԿ ԲԵՐՈՒԿՎԱՆԻ ՈՒՇԻ ՏԱՐՎ V=10 ՄՆ
12	ԱՆՏՈՒԵԼԿՏՐՈՒ ԼԵՍԱՑՈՒՄԱԿԵՐ
13	ԳԱՎԱԴՐՈՒՄԵՂՆԻ ՑՈՒ ՏԱՐՎ ԴՈՒՄԱԿԱՅԱՆՈՒՎ V=120 ՄՆ

ՏՐՈՐԵՆ	Ձ. ԿԱՐԳԱՅԱՆ	ՔԱՐԿԱՆ	ԲԱՍՏԱՆԱԿԱՆՈՒՄԻ ԼԵՍԱՑՈՒՄԱԿՆԵՐ ԿԱՅԱՆՈՒՄԻ 22 ԱՆՈՒՆԻ ՄԱՐԿԱՆ ՄԱՐԿԱՅԵՑ ՀԱՄԱՐՔ.ԳՅՈՒՂ.ԳՈՐԿԱՆԱԿԱՆ.1-Ի.ՓՈՐՏՆ 105 ԶՐԱՎԱՆԱՆ	ՓՈՒ	ՁԵՐԸ	ՁԵՐԹԵՐ
Ն. Գ. Ճ.	Կ. ՀՈՒԿԵՑԱՆ		ՄԵՓԵՎԱՆԱՅԵՐ՝ «ԳԱՅՈՒՄԱՆ» ՍՊԿ	Ա	5	64
Ն. Գ. Ճ.	Ա. ԴԱՐՅԱՆ		ՃԱՐՏԱՐԱՐԵՏԱՎԱՆ. ՄԱՍ			
			ՔԱՆԱԿՈՒՄԻ ՀԱՏՈՎԱԳՐՈՒ Մ 1:500			
				«ԱՐԿԱՏՐ» ՍՊԿ		

ՀԱՏԱԿԱԳԻԾ ԸՍՏ 0.00 ՆԻՇԻ Մ 1:100




№	ԱՆՎԱՆՈՒՄ	ՄԱԿԵՐԵԱ
1	Սենտրի սրահ	57,87
2	Ապաստարան	36,64
3	Օւթրատորի սենյակ	9,52
4	Դահլաճի սենյակ	8,10
5	Աանհանգրյց	3,60
6	Տնօրնի սենյակ	12,90
7	Դահլաճի սենյակ	9,60
8	Աանհանգրյց	3,60
9	Դահլաճ	11,88
10	Դահլաճ	6,63
11	Աանհանգրյց	4,53
12	Աանհանգրյց	6,29
13	Աանհանգրյց	4,53
14	Դաշխատանքի սենյակ	11,16
15	Աշխատանքայնակ	10,25
16	Աշխատանքայնակ	9,69
		206,69 m²

2  
10.00 m²  
— մենթերի ճաստրը  
— մենթերի մակերես

ՃԱՆՈՒՅՈՒՄ  
ԼՐԱՏԱԿԱՑՈՒՄ ՏՐՊԵՆ ԵՆ ԿՈՆՏՐՈԼԻՆԳ ՉԱՅԱՆԵ ԱՌԱՏ  
ՀԱՐՊԵՐԱՆ ԱՌՈՒՅԻՐ ԴԱՏԱՅՈՒՅՈՒՄԱՐԻ

ՏՐՈՐԵՆ	Չ. ԿԱՐՄԻՅԱՆ	<i>[Signature]</i>	ՔՐԻՏԵՐ-ՎԱՈՐՈՒՄԻՆԻԼ ԼՍՈՎԿԵՍԻՄԻՆԻ ԿՈՄՊՆԻԿՆԻ 22 ԼՈՐԻՈՒ ԻՄԱԳՆԱՆԱՐԿՆԵՆԵՆԵՆԵՐԻ ՉԱՅԱՆԵ ՓՊՏՈՒՆ ԳՈՐԳ ԱՐԵՎԻԼԻ Ի.Ի.ՓՐՈՏ 10/5 ՆՈՂԱՆԱՄ	ՓՈՒՆ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԻՐ
Ն. Գ. Հ.	Կ. ՆՈՒԵՆԱՆ	<i>[Signature]</i>	ՄԵՓՈՎԱՆԱՏԵՐ՝ «ԳՆՈՒՈՒՆ» ՍՊԸ	Ա	7	64
Ն. Գ. Հ.	Ա. ԴԱԿԻՅԱՆ	<i>[Signature]</i>	ՃԱՏԱՆԱԴՐՆԵՍԱԿԱՆ ՄԱՍ ՄՐԱՍՈՒՄՈՒՄ ԵՒ ՕՊԻԵՐԱՏՈՐԻՆԳՆ ԽՈՒՂԱՇԵՆՔ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԸՍՏ 0.00 ՆԻՇԻ Մ 1:100	«ՄՐԱՏՈՒՄ» ՍՊԸ		



**ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

h/h	Շինարարական աշխատանքների անվանումը	Աշխատանքների իրականացման տևողությունը ամիսներով																			
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	
1	Նստյան աշխատանքներ	■	■																	■	
2	Ժառանգանշարի կառուցում		■																		
3	Ոչ մեծ խորանցքների կառուցում			■	■																
4	Վարանային գրանդերի և ծածկերի կառուցում				■	■															
5	Պատերի կառուցում					■	■														
6	Տանիքի կառուցում							■	■												
7	Արջնաբանների կառուցում								■	■											
8	Դռների և պատուհանների անջատում										■	■	■								
9	Նստանիքների կառուցում												■	■	■						
10	Էլ. մեծածախան աշխատանքներ										■	■								■	
11	Սան. տեխ. աշխատանքներ							■	■											■	
12	Ներքին հարդարման աշխատանքներ														■	■	■				
13	Արտաքին հարդարման աշխատանքներ															■	■	■			
14	Քարակազմակերպման աշխատանքներ																			■	■
15																					

Ա.Գ.Լ.Ե.Կ. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆ 18 ԱՄԱՍ ԸՆԹԱՑՈՒՄ

### 5. 1. 2. Շահագործման փուլ

Նախատեսվում են չորս հատ երկփողանի բնական գազի լցայուններ մեկ ընդհանուր մետաղական ծածկով, ստորգետնյա գազի կուտակիչ հոր  $V=400$ լ, 12հատ (ընդհանուր 4.8խմ): Հեղուկ գազի լիցքավորման կայանի շահագործման համար նախատեսված է մեկ հատ երկփողանի բաշխիչ, ինչպես նաև  $V=10$  խմ տարողությամբ ստորգետնյա հեղուկ գազի գազամբար: Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի շահագործման համար նախատեսված է մեկ հատ չորս փողանի հեղուկ վառելիքի լցայունակ, (որից երեք հատը բենզին, իսկ մեկ հատը դիզ վառելիքի համար), ինչպես նաև չորս հատ 10խմ տարողությամբ հեղուկ վառելիքի տարաների համար հոր:

Ըստ նախագծային փաստաթղթերի գործունեության հզորությունները՝ վառելիքի վաճառքի առավելագույն տարեկան քանակները հետևյալն են.

- Բնական գազ՝ 438. 0 տ,
- Հեղուկ գազ՝ 48. 0 տ,
- Բենզին՝ 180 տ,
- Դիզ. վառելիք՝ 120 տ:

#### *Գազալցակայանի տեխնիկական բնութագրերը*

Ըստ տեխնիկական պայմանների, ավտոմեքենաների գազալցման մոդուլային կայանները նախատեսված են 9 բալ /ներառյալ/ սեյսմակայունության,  $-60^{\circ}$  C արտաքին նվազագույն ջերմաստիճանի, 1960 Պա ձյան բեռի և 441 Պա քամու դինամիկ ճնշման հաշվարկով:

Գազալցվող ավտոմոբիլների համար սեղմված վառելիքային գազը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 27577-87 պայմաններին:

ԱԳՆԿՍ դուրս եկող գազի հաշվարկային կազմը տոկոսային հարաբերությամբ.

Մեթան	-95,01
Էթան	-1,42
Պրոպան	-0,51
Իզոբուտան	-0,05
Իզոպենտան	-0,02
Թթվածին	-0,06
Ազոտ	-2,45
Հեքսան	-0,01

Ծծմբաջրածին-0,0015 գր/մ<sup>3</sup>

Թույլատրված պարունակությունը:

Էթան – մինչև 20%, պրոպան – մինչև 5%, բուտան– մինչև 2%, ազոտ– մինչև 10%, ածխաթթու գազ– մինչև 2%:

Գազի խտությունը, կգ/մ<sup>3</sup> – 0,65+0,85:

Նվազագույն ջերմաստվությունը – 7920 կկալ/մ<sup>3</sup>

Խոնավության և ծանր ածխաջրածինների ցողի կետերի ջերմաստիճանը և մեխանիկական խառնուրդների պարունակությունը ԱԳԿԿ մուտքին – ըստ OCT 51.40-83:

ԱԳԿԿ մուտքին գազի ջերմաստիճանը . +30°-ից -5°

ԱԳԿԿ մուտքին գազի ճնշումը.0,4+0,6 ՄՊա /բացարձակ/

Մեքենայի բալոններում գազի ամենաբարձր ճնշումը – 19,6 ՄՊա:

Ելքի 0,8 ՄՊա ճնշման դեպքում ԱԳԿԿ-ի անվանական լիցքավորման հնարավորությունը օրական 250 մեքենա է:

Մեքենան գազով լիցքավորելու ծավալը՝ 60 նմ<sup>3</sup> - ԳԱԶ մակնիշի ավտոմեքենաների համար 80 նմ<sup>3</sup> - ԶԻԼ մակնիշի ավտոմեքենաների համար:

Մեքենան գազով լիցքավորելու հաշվարկային ծավալը - 70 նմ<sup>3</sup>

Մեկ մեքենայի լիցքավորման ժամանակը, ներառյալ օժանդակ գործողությունները, 10-12 րոպե է:

ԱԳԿԿ աշխատանքի ռեժիմը շուրջօրյա է՝ առանց վերանորոգման համար աշխատանքների լրիվ դադարեցման: Լրիվ զբաղվածության դեպքում տարվա մեջ ԱԳԿԿ աշխատանքի հաշվարկային օրերի քանակը 360 աշխատանքային օր է:

Աշխատող կոմպրեսորի ԱԳԿԿ առավելագույն պահանջվող հզորությունը 225 կվտ է:

Նախագծի տեխնիկական որոշումները համապատասխանում են 1986թ. հրատարակված □ԱԳԿԿ տեխնիկական սպասարկման և անվտանգ շահագործման կանոններին□:

Համաձայն 1986թ. հրատարակված « ԱԳԿԿ տեխնիկական սպասարկման և անվտանգ շահագործման կանոնների» խողովակների վթարային քանակ չի պահանջվում:

Սարքավորումների և խողովակաշարերի վիբրացիայի (տատանումների) մակարդակը համապատասխանում է ՌՏՄ 26-12-11-75 «Գլանային օպոզիտային կոմպրեսորներ: Գազի ճնշման տատանման և հաղորդակցման տատանման հաշվարկի մեթոդակարգին» և ԳՈՍՏ 12.2.016-76 «Կոմպրեսորային սարքավորումներ: Անվտանգության ընդհանուր պահանջներին»:

Տարողությունների կառուցվածքը թույլ է տալիս իրականացնել լիցքավորման փողրակների ինչպես աջ, այնպես էլ ձախ տեղադրվածություն ունեցող մեքենաների լիցքավորումը: Այդ պատճառով էլ ԱԳԿԿ տարածքում ավտոմոբիլների հանդիպակաց երթևեկություն չպետք է լինի:

### Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիրը

Բնական գազը հիմնական գազատարից անցնելով ճնշման կարգավորիչով մտնում է կոմպրեսորային բաժին:

Կոմպրեսորային բաժնում գազը մաքրվում է մեխանիկական խառնուրդներից և խոնավությունից և մտնում կոմպրեսորներ: Կայանում տեղադրվելու է ՄՊ-10/250ՄՅ2



տիպի 1 հատ ճնշակային տեղակայանք: Կոմպրեսորների սառեցումը կատարվում է ջրային եղանակով:

Կոմպրեսորներից հետո գազը մաքրվում է յուղից և խոնավությունից: Անջատված յուղը և ջրի կաթիլները հավաքվում են հատուկ տարողության մեջ:

Կոմպրեսորային բաժնից գազը տրվում է կուտակիչներ ( $V=400$ լ 12հատ) որտեղից և լցայունակներ: Կայանում օգտագործվում են հերմետիկ սարքավորումներ, հսկիչ չափիչ սարքեր, ավտոմատ կարգավորիչներ, որոնց շնորհիվ գազի սեղման, չորացման և մաքրման ընթացքում բացառվում են արտանետումները:

Ավտոմեքենաների գազալիցքավորումը կատարվում է ձկափողի օգնությամբ: ձկափողերը միացված են կոմպրեսորների մուտքին և մնացորդային գազը ներքաշվում է կոմպրեսորների մուտքի գծի մեջ:

## 6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Բազմավառելիքային լցակայանի ծրագիրը բաղկացած է երկու տարբեր փուլերից.

- շինարարական աշխատանքներ,
- լցակայանի շահագործում:

Համապատասխանաբար ազդեցությունները կլինեն տարբեր և ստորև ներկայացվում են առանձին:

### 6.1. Շինարարական աշխատանքներ

Շինարարության փուլում ազդեցությունը պայմանավորված է փոշու արտանետումներով, աղմուկի մակարդակի բարձրացմամբ, շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

#### 6.1.1. Օդի աղտոտում

Շինարարության ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխազագերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են շենքերի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզելառելիքի այրման արդյունքում:

#### 6.1.2. Հողային աշխատանքներ

Հիմքերի փորման, հողի բեռնման և տեղափոխման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել նույն՝ ստորև բերված բանաձևով:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K7 \times B \times G \times 106 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը փոշու մասնաբաժինն է, որը կարող է վերածվել աերոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.0

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում գրունտի խոնավությունը, 0.6 /հաշվի առնելով ջրցանը/

K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում գրունտի չափերը, 0.4

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Շինարարության ընդհանուր տևողությունը կկազմի 18 ամիս, հողային աշխատանքների տևողությունը նախատեսված է 50 աշխատանքային օր:

Փորվող, հանվող հողի/գրունտի ընդհանուր զանգվածը կազմում է  $G = 4320 \text{ մ}^3$  ամբողջ ընթացքում, մեկ ժամում՝

$4320 \text{ մ}^3 : 50 \text{ օր/շին.} \cdot 8 \text{ ժամ/օր} = 10.8 \text{ մ}^3/\text{ժամ}$  կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝

$10.8 \text{ մ}^3/\text{ժամ} \times 1.6 \text{ տ/մ}^3 = 17.3 \text{ տ/ժամ}$ :

$Q = 0.05 \times 0.02 \times 1.0 \times 1.0 \times 0.6 \times 0.4 \times 0.6 \times 17.3 \times 10^6 / 3600 = 0.69 \text{ գ/վրկ}$

Փոշու գումարային արտանետումները հողային աշխատանքների արդյունքում կկազմեն՝

$0.69 \text{ գ/վ} \times 50 \text{ օր/շին} \times 8 \text{ ժամ/օր} \times 3600 \text{ վ}/10^6 = 0.99 \text{ տ/շին. ժամանակահատված:}$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված՝ ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, գրունտի խոնավացում, տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափփի ծածկման պայմաններում:

### **6. 1. 3. Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Աշխատատեղերում աղմուկի մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին:

Աղմուկի ազդեցությունը պայմանավորված կլինի շին. տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

Օգտագործվող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը կառավարման խցում չզերազանցի 80 դԲա: Այս ցուցանիշը թույլ կտա ապահովել աշխատանքային տեղամասերի սանիտարական նորմերը, իսկ հաշվի առնելով հեռավորությունը բնակելի թաղամասերից, ազդեցությունը բնակավայրերում գործնականում չի զգացվի:

#### **6. 1. 4. Ջրօգտագործում և ջրահեռացում**

Շինարարության ընթացքում ջուրն օգտագործվելու է աշխատանքային հրապարակների ջրցանի, փորվող հանվող հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Վեոլիա ջուր ընկերության ջրատարից, ընդ որում միացումը կիրականացվի առաջնահերթ, ապահովելու համար շինարարական աշխատանքների անխափան ընթացքը:

#### **ա. Ջրցան**

Հողային աշխատանքները նախատեսված են տարվա տաք եղանակին, համապատասխանաբար, անհրաժեշտ կլինի իրականացնել աշխատանքային հրապարակների ջրցան: Շինարարական հրապարակի մակերեսը նախատեսված է 800 մ<sup>2</sup>:

Ջրցանի չափաքանակը կազմում է 1.5լ/մ<sup>2</sup>:

Հողային աշխատանքների տևողությունը՝ 50 օր, ջրցանը իրականացվում է օրական երկու անգամ:

Օրական ջրցանի ջրապահանջը կկազմի՝

$$800 \text{ մ}^2 \times 2 \times 0.0015 \text{ մ}^3/\text{մ}^2 = 2.4 \text{ մ}^3/\text{օր}:$$

Ընդամենը.

$$50 \text{ օր} \times 2.4 \text{ մ}^3/\text{օր} = 120.0 \text{ մ}^3/\text{շին. ժամանակ}:$$

#### **բ. Գրունտի խոնավացում**

Փորման աշխատանքների արդյունքում հանվում է ընդհանուր 4320 մ<sup>3</sup> գրունտ: Այդ ընթացքում փոշու արտանետումները կրճատելու նպատակով իրականացվում է գրունտի խոնավացում:

Խոնավացման համար անհրաժեշտ ջրաքանակը կկազմի.

$$4320 \text{ մ}^3 \times 8 \text{ ր} / \text{մ}^3 = 34560 \text{ ր կամ } 34.56 \text{ մ}^3:$$

Միջին օրական՝  $34.56 : 50 \text{ օր} = 0.69 \text{ մ}^3/\text{օր}$ :

*գ. Խմելու-կենցաղային ջուր*

Խմելու ջրապահանջ

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Օրական, մեկ բանվորին – 25 լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին – 16լիտր

Շինարարական անձնակազմը նախատեսված է՝ 17 հոգի, այդ թվում՝ 2 ինժեներատեխնիկական աշխատող (ԻՏԱ) և 15 բանվոր և մեքենավար:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝  
 $W_{\text{խ.տ.}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T$ , որտեղ՝

$n_1$  – ԻՏԱ և վարչական աշխատողների թվաքանակն է՝ 2 մարդ

$N_1$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

$n_2$ –բանվորների թվաքանակն է՝ 15 մարդ

$N_2$ –բանվորների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

$T$  –աշխատանքային օրերի թիվն է՝ 18 ամիս x 22 օր/ամիս = 396 օր

$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 15 \times 0.025) \times 396 = 161.2 \text{ մ}^3/\text{շին. ընթացքում}$ :

Խմելու և կենցաղային օրական ջրապահանջը կլինի 0.407:

*դ. Ջրահեռացում*

Տարածքների ջրցանի և հողերի խոնավացման ջրօգտագործման արդյունքում արտահոսք չի առաջանում:

ա. Տնտեսական կենցաղային կեղտաջրեր

$W_{\text{կենց.կոյուղի}} = W_{\text{կենցաղ.}} \times (1 - \Psi)$ , որտեղ՝

$\Psi$ ՝ կորուստները, ընդհանրացված 5 տոկոս /0.05/,

$W_{\text{կենց.կոյուղի}} = 161.2 \text{ մ}^3 \times (1 - 0.05) = 153.1 \text{ մ}^3$ :

Կենցաղային կեղտաջրերը հավաքվում են ջրանթափանց հորում, որտեղից պարբերաբար կտեղափոխվեն մոտակա կոյուղու ցանց: Հորի կառուցումը կկատարվի առաջնահերթ:

### **6. 1. 5. Ազդեցությունը հողածածկի վրա**

Շինարարական աշխատանքների ժամանակ հողածածկի աղտոտում չի սպասվում:

Հողային աշխատանքների ժամանակ կհանվի 480 մ<sup>3</sup> բուսահող, որը կառանձնացվի գրունտից, կպահեստավորվի և կտնօրինվի ՀՀ կառավարության 02.10.2017 թ N 1404-Ն պահանջներին համապատասխան: Այս միջոցառման շրջանակներում բերրի հողը կհանվի, կտեղափոխվի տարածքի հարավային մաս՝ որտեղ նախապես կտոփանվի հողածածկը, կկազմակերպվի արգելափակող սահմանագատիչների կառուցում (ծորժյօր) և ծածկ: Աշխատանքների ավարտից հետո բերրի հողը կօգտագործվի տարածքի բարեկարգման և կանաչապատման նխատակով:

### **6. 1. 6. Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա**

Ինչպես նշվել է 3-րդ գլխում, տարածքը նախկինում ամբողջության յուրացված էր և այստեղ չկան բնական բուսածածկ կամ վայրի կենդանիների ապրելավայրեր: Համապատասխանաբար ազդեցություն կենսաբազմազանության վրա նույնպես չի լինի:

### **6. 1. 7. Սոցիալական ազդեցությունը**

Սոցիալական ազդեցության գործոններն են՝ շինարարական աշխատանքները, նոր աշխատատեղերի ստեղծումը, հողօգտագործում և հողի ձեռքբերում, ենթակառուցվածքների վրա հավելյալ լարվածություն, տեղական աշխատուժ, ժողովրդագրական խնդիրներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում այս բոլոր գործոնները չեն ունենա եական ազդեցություն, քանի որ շինարարական հրապարակը գտնվում է զգալի հեռավորության վրա բոլոր ընկալիչներից, առաջին հերթին բնակելի թաղամասերից: Միևնույն ժամանակ այս ընթացքում կստեղծվեն աշխատատեղեր, ընդհանուր 17, որոնք թույլ կտան 17 ընտանիքներին բարելավել իրենց կենսամակարդակը:

## **6.2. Շահագործման փուլ**

### **6. 2. 1. Օդի աղտոտում**

Հեղուկ օրգանական վառելիքի ածխաջրածինների արտանետման աղբյուրներ են հանդիսանում նավթամթերքի ռեզերվուարները և վառելիքի լցման հանգույցները:

